

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Մեթոդաբանությունը և հիմնական եզրահանգումները)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ)¹ 40 հանձնարարականների համաձայն², երկրները պարտավոր են բացահայտել, գնահատել և հասկանալ իրենց ՓԼ/ԱՖ ռիսկերը: Գնահատման արդյունքներից ելնելով՝ երկրները պետք է ռիսկահենք մոտեցման հիման վրա ձեռնարկեն ՓԼ/ԱՖ ռիսկերի կանխարգելմանը կամ զսպմանն ուղղված համարժեք միջոցառումներ:
2. Ռիսկերը բացահայտելը, գնահատելը և հասկանալն առանցքային նշանակություն ունեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգի ձևավորման ու զարգացման համար: Պետական կարգավորման տեսանկյունից դա դրսևորվում է համապատասխան ոլորտային քաղաքականության մշակման ու հիմնավորված որոշումների կայացման, իսկ մասնավոր հատվածի տեսանկյունից՝ համարժեք ներքին հսկողության ընթացակարգերի ներդրման ու իրականացման միջոցով:
3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կայուն և շարունակաբար կատարելագործվող համակարգ ունենալու նպատակով Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ձեռնարկվել են հիմնարար քայլեր՝ ուղղված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային ստանդարտների ներդրմանն ու իրագործմանը: Համակարգի երկու առանցքային՝ իրավական և ինստիտուցիոնալ բաղկացուցիչները գնահատվել են միջազգային ստանդարտների պահանջներին ու առաջավոր փորձին մեծապես համապատասխանող: Այդ են վկայում ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանության մասով կատարված միջազգային գնահատումների արդյունքները³: Այդուհանդերձ, ինչպես գնահատումներով, այնպես էլ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի շուրջ մեկ տասնամյակի պատմություն

¹ ՖԱԹՖ-ի մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

² Հանձնարարական 1, հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

³ Վերջին միջազգային գնահատումը կատարվել է 2009 թվականին՝ ԱՄՀ-ի և Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից, գնահատման հաշվետվությունը հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

ունեցող փորձով վեր են հանվել որոշակի թերություններ և բացեր, որոնց լիարժեք ու համապարփակ լուծումը կապահովի համակարգի արդյունավետության հետագա բարելավումը:

4. Վերը նշված նպատակները համակարգված իրագործելու համար ՀՀ-ում մշակվում և ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը⁴: Վերջինս արտացոլում է համակարգի զարգացման առաջնայնությունները՝ հաշվի առնելով նաև ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատումների արդյունքները:
5. ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու, գնահատելու և հասկանալու հետ կապված գործընթացները գտնվում են Միջգերատեսչական հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, ինչը վկայում է ՀՀ իշխանությունների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգի կայացմանն ուղղված հետևողական ջանքերի մասին: ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատումների արդյունքները ենթակա են ըստ անհրաժեշտության պարբերաբար վերանայման:
6. Ազգային մակարդակով ՓԼ/ԱՖ ռիսկերի առաջին գնահատումը ՀՀ-ում կատարվել է 2010 թվականին⁵ ՓԼ/ԱՖ հանցագործությունները և դրանց դեմ պայքարի վրա ազդեցություն ունեցող աղբյուրները, ոլորտները, սխեմաները և/կամ նպաստող հանգամանքները հստակեցնելու, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմներն առավել թիրախավորված ու արդյունավետ դարձնելու նպատակով⁶:
7. 2013 թվականի սեպտեմբերին Միջգերատեսչական հանձնաժողովի նիստում հաստատվել է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման նոր ձեռնարկը: Ձեռնարկի մշակման համար հիմք են ընդունվել միջազգային կառույցների կողմից հրապարակված հետևյալ փաստաթղթերը.
 - «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ, ՖԱԹՖ-ի Հանձնարարականներ», ՖԱԹՖ (2012թ.)⁷,
 - «ՖԱԹՖ-ի ուղեցույց. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ազգային գնահատումը», ՖԱԹՖ (2013թ.)⁸,

⁴ 2013-2015թթ. ժամանակահատվածի համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

⁵ Գնահատման հաշվետվությունը հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

⁶ Հարկ է նշել նաև, որ 2012-2014թթ. ԱՄՀ-ի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում իրականացվել է նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ) ՓԼ/ԱՖ ռիսկերի համալիր վերլուծություն:

⁷ Փաստաթուղթը (անգլերեն լեզվով) հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ազգային գնահատումներին օժանդակելու նպատակով տվյալների հավաքման համար ԵԱՀԿ ձեռնարկ», Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (2012թ.)⁹,
 - «Փողերի լվացման ազգային ռիսկերի գնահատման գործիքի կիրառության մեթոդաբանություն և հրահանգաթերթիկ», Համաշխարհային բանկ (2012թ.)¹⁰:
8. ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման ձեռնարկի հաստատումից հետո համապատասխան պետական մարմիններից և մասնավոր հատվածից հավաքված 2010-2013թթ. վիճակագրական տվյալներն ու այլ տեղեկատվությունը հիմք են հանդիսացել սույն հաշվետվության կազմման համար: Իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց գործունեության վերլուծության նպատակով հաշվի են առնվել առ 01.11.2014թ. առկա օրենսդրական կարգավորումները և դրանց կիրառության պրակտիկան: Գնահատման գործընթացում անմիջականորեն ներգրավված են եղել ինչպես շահագրգիռ պետական գերատեսչությունների, այնպես էլ մասնավոր հատվածի ներկայացուցիչները:
9. Գնահատման եզրահանգումները նախատեսվում է տրամադրել ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի տարբեր փուլերում ներգրավված իրավասու մարմիններին (այդ թվում՝ համապատասխան ինքնակարգավորվող մարմիններին), «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին, ինչպես նաև հանրամատչելի տեսքով հասանելի դարձնել լայն հանրությանը: Այդ եզրահանգումները հաշվի կառնվեն նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության հերթական թարմացման ժամանակ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10. Ռիսկերի վերլուծությունը, մասնավորապես՝ դրանք բացահայտելը, ուսումնասիրելը, գնահատելն ու հասկանալը առաջին քայլն է, որն անհրաժեշտ է ձեռնարկել ռիսկերի զսպման կամ կանխարգելման միջոցով դրանց կառավարման համար:

⁸ Փաստաթուղթը (անգլերեն լեզվով) հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

⁹ Փաստաթուղթը (անգլերեն լեզվով) հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

¹⁰ Փաստաթուղթը (անգլերեն լեզվով) հասանելի է [հետևյալ հղմամբ](#):

11. ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային վերլուծության շրջանակում, երկրում առկա ռիսկերի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու նպատակով դիտարկվում են երկու հիմնական գործոն՝ ՓԼ/ԱՖ տեսանկյունից **հնարավոր սպառնալիքները** և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի **հնարավոր խոցելիությունները**: Այս երկու գործոնների՝ տարբեր համատեքստերում փոխգործակցության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել համակարգի բաղկացուցիչ մասերում¹¹ և մասնակիցների¹², ինչպես նաև համակարգին առնչվող կազմակերպատիրական միավորների¹³ շրջանում ՓԼ/ԱՖ ռիսկերի դրսևորման հնարավոր հետևանքների կամ այսպես կոչված «մնացորդային ռիսկի» մասին, որոնց համարժեք ձեռնարկվում են կանխարգելման և զսպման միջոցառումներ:
12. Գնահատման մեթոդաբանության առումով, ՓԼ և ԱՖ հնարավոր սպառնալիքները և խոցելիությունները գնահատվում են 1-ից մինչև 5 բալանոց հետևյալ սանդղակով. 1 – շատ ցածր, 2 – ցածր, 3 – միջին, 4 – բարձր և 5 – շատ բարձր: Տեսանելի ապագայում փոփոխության միտումների տեսանկյունից սպառնալիքները և խոցելիությունները կարող են բնութագրվել որպես նվազող, կայուն կամ աճող:
13. Գնահատումն իրականացնելիս չափազանց կարևոր է ճիշտ բնութագրել մի կողմից՝ ՓԼ/ԱՖ տեսանկյունից հնարավոր սպառնալիքների, իսկ մյուս կողմից՝ դրանց հակազդելու կարողությունների միջև փոխգործակցությունը՝ այսպես կոչված «մնացորդային ռիսկը» հասկանալու համար:
14. Օրինակ, եթե առանձնապես խոշոր չափերով նախորդող հանցագործությունների մասով ՓԼ հնարավոր սպառնալիքները երկրում գնահատվել են շատ բարձր (երկրում հանցավորության բարձր մակարդակի հիմքով), իսկ ֆինանսական հաստատությունների՝ այդ սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից խոցելիությունը գնահատվել է շատ ցածր (ֆինանսական հաստատություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ կանխարգելիչ համակարգի առկայության հիմքով), ապա «մնացորդային ռիսկը» չպետք է գնահատվի շատ բարձր և ոչ անպայմանորեն պետք է գնահատվի բարձր. միանգամայն ընդունելի տարբերակ կարող է լինել ռիսկի միջին կամ ցածր գնահատումը՝ կախված սպառնալիքների և խոցելիությունների գնահատված մեծությունից:

¹¹ Մասնավորապես՝ իրավական և ինստիտուցիոնալ համակարգերում:

¹² Մասնավորապես՝ հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունների և ՆՈՖԳՏՄ-ների շրջանում:

¹³ Մասնավորապես՝ իրավաբանական անձանց և կազմավորումների, ոչ առևտրային կազմակերպությունների շրջանում:

Սպառնալիքները

15. Սպառնալիքները, ընդհանուր առմամբ, բնորոշվում են որպես անձինք կամ գործողություններ, որոնք կարող են վնաս հասցնել պետությանը, հասարակությանը կամ տնտեսությանը: ՓԼ/ԱՖ տեսանկյունից դրանց շարքին են դասվում, օրինակ, հանցագործները, ահաբեկչական կազմակերպությունները, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հանցանքները: ՓԼ/ԱՖ սպառնալիքները պայմանավորված են ինչպես երկրի համար բնութագրական միջավայրի առանձնահատկություններով, այնպես էլ երկրում առկա հանցավորության դրսևորումներով:
16. **Փողերի լվացմանն** առնչվող սպառնալիքները բացահայտելու նպատակով, ի թիվս այլ գործոնների, ուսումնասիրվել է երկրում հանցավորության մակարդակը՝ ըստ կատարված նախորդող հանցագործությունների քանակի և ՓԼ տեսանկյունից դրանց ռիսկայնության, հանցավորության դրսևորման միտումները և ակնկալվող դինամիկան: **Ահաբեկչության ֆինանսավորմանն** առնչվող սպառնալիքները բացահայտելու նպատակով հաշվի են առնվել ահաբեկչական գործողությունների և ահաբեկչական կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև դրանց ֆինանսավորման համար նպաստավոր պայմանների առկայությունը, ազգային և միջազգային համատեքստում ԱՖ հնարավոր սխեմաների վերաբերյալ առկա տեղեկությունները:
17. Սպառնալիքների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելը ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված բոլոր կողմերին, այդ թվում՝ պետական մարմիններին և հաշվետվություն տրամադրող անձանց օգնում է լավագույնս ուղղորդել իրենց ջանքերը ՓԼ/ԱՖ հնարավոր սխեմաներ բացահայտելու և դրանց գործարկումը կանխարգելելու գործում:

խոցելիությունները

18. Երկրի առջև ծառայած ՓԼ/ԱՖ ռիսկերին պատշաճ կերպով հակազդելու համար անհրաժեշտ է նաև բացահայտել ու գնահատել համապատասխան խոցելիությունները: Վերջինները կարելի է բնութագրել որպես համակարգում առկա թերություններ կամ բացեր, որոնք կարող են չարաշահվել սպառնալիք ներկայացնող անձանց կողմից կամ գործողությունների շրջանակում կամ նպաստել դրանց հանցավոր նպատակների իրագործմանը: Վերլուծությամբ գնահատվում է, թե հայտնաբերված թերություններն ու բացերը ինչպես կարող են անդրադառնալ ընդհանուր համակարգի խոցելիության վրա:
19. ՓԼ/ԱՖ հնարավոր խոցելիությունների համակողմանի վերլուծության նպատակով ուսումնասիրվում են երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգին անմիջականորեն առնչվող միջավայրային և կառուցվածքային տարրերը, համատեքստային

գործոնները, իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը, հաշվետվություն տրամադրող անձանց խմբերը, ինչպես նաև որոշակի կազմակերպարավական միավորներ:

Արդյունքները և օգտագործողները

20. Երկրում առկա ՓԼ/ԱՖ սպառնալիքների և խոցելիությունների բացահայտումը և գնահատումը թույլ է տալիս ձեռնարկել համարժեք միջոցներ՝ արձանագրված սպառնալիքների համատեքստում առկա խոցելիությունները վերացնելու և դրանց չարաշահումը կանխարգելելու նպատակով:
21. Գնահատման արդյունքները հիմք են ծառայում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության վերանայման, ՓԼ/ԱՖ ոլորտը կարգավորող իրավական համակարգի հետագա բարելավման, ինստիտուցիոնալ համակարգի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջների համապարփակ իրականացման համար:
22. ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքների օգտագործողներն են.
 - Բարձր մակարդակով ոլորտային քաղաքականությունների մշակման և իրագործման համար պատասխանատու գերատեսչությունները,
 - Ֆինանսական հետախուզության ազգային մարմինը,
 - Օպերատիվ-հետախուզական, քննչական և այլ իրավապահ գործունեություն իրականացնող մարմինները,
 - Լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության գործառույթ իրականացնող մարմինները,
 - Հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունները և ՆՈՖԳՏՄ-ները,
 - Ոչ առևտրային կազմակերպությունները,
 - ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատում իրականացնող միջազգային կառույցները և կազմակերպությունները,
 - Հասարակության լայն շերտերը, փորձագիտական և մասնագիտական հանրությունը:
23. Ակնկալվում է, որ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքների ներպետական օգտագործողները գնահատման եզրահանգումները կօգտագործեն իրենց պատասխանատվության ոլորտներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (այդ թվում՝ գործողությունների ծրագրեր) մշակելու և իրականացնելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

24. ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատումը կատարվել է մի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր **սպառնալիքները**, մյուս կողմից՝ այդ սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից հնարավոր **խոցելիությունները** բացահայտելու, չափելու և հասկանալու միջոցով:
25. **ՓԼ հնարավոր սպառնալիքների** վերլուծությունը և գնահատումը կատարվել է ՓԼ համար նախորդող համարվող «ցանկով» նախատեսված հանցագործությունների մասով 2010-2013թթ. ընթացքում կայացված մեղադրական դատավճիռների հիման վրա՝ համարելով, որ դրանք լավագույնս արտացոլում են երկրում փողերի լվացման հանցակազմ պարունակելու պոտենցիալ ունեցող կատարված և ապացուցված հանցագործությունների պատկերը: Ընդ որում, այդ հանցագործությունների թվից նախ տարանջատվել են հանցավոր գույքի ստացմանը հանգեցնող հանցագործությունները, որից հետո վերլուծությունը կենտրոնացել է առանձնապես խոշոր չափերով կատարված հանցագործությունների վրա¹⁴:
26. Մասնավորապես, դիտարկվող ժամանակահատվածում ապացուցված նախորդող հանցագործությունների 20%-ը ՓԼ հանցակազմ պարունակելու պոտենցիալ չի ունեցել, քանի որ չէր կարող հանգեցնել հանցավոր գույքի ստացմանը, իսկ ևս 12%-ը կարող էր, սակայն չի հանգեցրել հանցավոր գույքի ստացմանը՝ հանցագործությունում շահադիտական դրդումների բացակայության պատճառով: Նախորդող հանցագործությունների՝ ՓԼ հանցակազմ պարունակելու պոտենցիալ ունեցող 68%-ից էական են համարվել առանձնապես խոշոր չափերով կատարված՝ ապացուցված նախորդող հանցագործությունների ընդհանուր թվի 9%-ը: Այդպիսի հանցագործություններում ներգրավված գույքի գնահատված մեծությունը 2010-2013թթ. ժամանակահատվածում կազմել է շուրջ 42 միլիարդ ՀՀ դրամ (միջինացված տարեկան փոխարժեքներով՝ շուրջ 106 միլիոն ԱՄՆ դոլար), կամ տարեկան կտրվածքով՝ շուրջ 10.5 միլիարդ ՀՀ դրամ (միջինացված տարեկան փոխարժեքներով՝ շուրջ 26.5 միլիոն ԱՄՆ դոլար):

Վերլուծության արդյունքներով, ՀՀ-ում ՓԼ առնչվող հնարավոր սպառնալիքների աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

¹⁴ Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար առանձնապես խոշոր չափ է համարվում ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը (այսինքն՝ 3 միլիոն ՀՀ դրամը) գերազանցող գումարը:

27. **ԱՖ հնարավոր սպառնալիքների** վերլուծությունը և գնահատումը կատարվել է մի կողմից ահաբեկչական գործողությունների և ահաբեկչական կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման համար նպաստավոր պայմանների առկայության, մյուս կողմից՝ ազգային և միջազգային համատեքստում ԱՖ հնարավոր կամ ապացուցված հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Վերլուծության եզրահանգմամբ, Հայաստանում կրոնական, ազգային պատկանելության կամ այլ դրդապատճառներով բախումների, փոքրամասնությունների իրավունքների խախտման, ծայրահեղական քարոզչության բացակայությունը խիստ նվազեցնում է անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների գործունեության հավանականությունը, իսկ ներդրված արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմները գործնականում բացառում են ֆինանսական կամ ոչ ֆինանսական համակարգերը ահաբեկչության ֆինանսավորման նպատակով չարաշահելու հնարավորությունը: Նշվածի մասին է վկայում նաև դիտարկվող ժամանակահատվածում ներպետական, ինչպես նաև միջազգային ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված՝ Հայաստանին առնչվող հետաքննությունների, նախաքննությունների կամ քրեական հետապնդման դեպքերի բացակայությունը:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ-ում ԱՖ առնչվող հնարավոր սպառնալիքների աստիճանը գնահատվել է շարք ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

28. ՓԼ և ԱՖ սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից **հնարավոր խոցելիությունները** գնահատվել են երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը բնութագրող մի շարք ոլորտներում, ինչպիսիք են միջավայրային և կառուցվածքային տարրերը, համատեքստային գործոնները, իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի մասնակիցների և որոշակի կազմակերպաիրավական միավորների շրջանում, ինչպիսիք են հաշվետվություն տրամադրող անձինք, իրավաբանական անձինք/ կազմավորումները և ոչ առևտրային կազմակերպությունները:

29. **Միջավայրային տարրերի** վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

- Աշխարհագրական միջավայրի տեսանկյունից, ՀՀ-ում ներդրված է հարևան երկրների հետ սահմանային հսկողության պատշաճ գործող ռեժիմ՝ հանցավոր ճանապարհով ստացված, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված միջոցների հնարավոր միջսահմանային տեղափոխումները

կանխարգելելու համար: Հարևան երկրներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի խոցելիություններից բխող ռիսկերը, հաշվի առնելով նաև սահմանակից չորս երկրներից երկուսի հետ սահմանների փակ լինելու հանգամանքը, կառավարելի են և գտնվում են ընդունելի մակարդակի վրա:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ աշխարհագրական միջավայրի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- Տնտեսական միջավայրի տեսանկյունից, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսության համար բնութագրական է եղել մակրոտնտեսական համեմատաբար կայուն վիճակը: Տնտեսության շուրջ մեկ հինգերորդ մասը կազմող գյուղատնտեսության ոլորտը համարվել է ՓԼ/ԱՖ տեսանկյունից ցածր ռիսկային, մնացած ճյուղերում իրականացվող գործառնությունները համապատասխանել են ողջամիտ տնտեսական և իրավաչափ հիմնավորում ունենալու պահանջին, իսկ դրանց գումարային արտահայտությունը համադրելի է եղել համապատասխան երկրների հետ երկկողմ անդրսահմանային փոխանցումների ծավալներին: Ստվերային տնտեսության առկայությունը, տնտեսությունում կանխիկի շրջանառությունը և դոլարիզացիայի բարձր մակարդակը ճանաչվել են որպես գործոններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության՝ ՓԼ/ԱՖ տեսանկյունից խոցելիության աստիճանի վրա, ուստի դրանց լուծմանն ուղղված միջոցառումները ճանաչվել են որպես պետական մարմինների կողմից իրականացվող քաղաքականության առաջնահերթ խնդիրներ:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ տնտեսական միջավայրի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

- Ժողովրդագրական միջավայրի տեսանկյունից, ՀՀ բնակչության համար բնութագրական է ազգային պատկանելության և դավանանքի առումով միատարրության շատ բարձր աստիճանը: Օրենսդրությունը և դրա կիրառման մեխանիզմներն ապահովում են ազգային փոքրամասնությունների հիմնարար իրավունքների պաշտպանությունն ու լիարժեք իրացումը, ինչի մասին վկայում են դրանց կազմակերպված համայնքների և միությունների գոյությունը, հասարակական կյանքին ակտիվ մասնակցությունը, ազգային կամ կրոնական հիմքով որևէ տարածայնությունների կամ բախումների բացակայությունը:

Վերլուծության արդյունքներով, ժողովրդագրական միջավայրի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է շատ ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

30. **Կառուցվածքային տարրերի** վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

- Քաղաքական կայունության տեսանկյունից, ՀՀ-ում գործող քաղաքական համակարգը գնահատվել է կայուն՝ ի դեմ սահմանադրական կարգով ձևավորվող և գործող իշխանության ինստիտուտների առկայության: Դիտարկվող ժամանակահատվածում երկիրն առաջընթաց է գրանցել քաղաքական կայունության ամրապնդման ուղղությամբ, ինչի մասին վկայում են նաև միջազգային հեղինակավոր կառույցների կողմից տրված գնահատականները¹⁵:

Վերլուծության արդյունքներով, քաղաքական կայունության մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- Բարձր մակարդակով հանձնառության տեսանկյունից, ՀՀ միացել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բոլոր հիմնական միջազգային համաձայնագրերին, դրանց իմպլեմենտացման նպատակով ընդունել է համապատասխան օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, անդամակցում և ակտիվորեն համագործակցում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների հետ: ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված բարձր մակարդակի Միջգերատեսչական հանձնաժողովը համակարգում և ուղղորդում է երկրում ՓԼ/ԱՖ դեմ արդյունավետ պայքարի իրականացմանն ուղղված ջանքերը:

Վերլուծության արդյունքներով, բարձր մակարդակով հանձնառության մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է շատ ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- Կայուն ինստիտուտների առկայության տեսանկյունից, ՀՀ-ում առկա են ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման անհրաժեշտ իրավաքաղաքական կառուցակարգերը: Երկրի հիմնական քաղաքական ինստիտուտները՝ ՀՀ ազգային ժողովը և Նախագահը ընտրվում են ուղղակի ընտրությունների միջոցով, որոնք անց են կացվում կայուն

¹⁵ Տես՝ «Գլոբալ էքոնոմի» ռեսուրսի կողմից Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա հաշվարկված [ինդեքսները](#):

պարբերականությամբ, և առկա են պետական ինստիտուտների գործունեության վերահսկողության հստակ մեխանիզմներ: «Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են մարդու և քաղաքացու՝ միջազգային հանրաճանաչ համաձայնագրերով նախատեսված իրավունքներն ու ազատությունները, նախատեսում դրանց պաշտպանության մեխանիզմներ:

Վերլուծության արդյունքներով, կայուն ինստիտուտների առկայության մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- ***Օրենքի գերակայության տեսանկյունից***, այդ սկզբունքի երաշխիքները տրվում են «Սահմանադրությամբ, որի գերակայությունից էլ սկսվում է դրա բնականոն իրացումը: Օրենսդրական դաշտը (այդ թվում՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությունը) բխում է «Սահմանադրության, իսկ ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը՝ համապատասխան օրենքների պահանջներից: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները հստակորեն սահմանազատված են, ինչը բացառում է պետական տարբեր մարմինների լիազորությունների կոլիզիան: Դիտարկվող ժամանակահատվածում երկիրն առաջընթաց է գրանցել օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ, ինչի մասին վկայում են նաև միջազգային հեղինակավոր կառույցների կողմից տրված գնահատականները¹⁶:

Վերլուծության արդյունքներով, օրենքի գերակայության մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- ***Պատշաճ դատական համակարգի առկայության տեսանկյունից***, երկրում առկա են դատական համակարգի անկախության և կայունության օրենսդրական երաշխիքներ, իսկ գործուն դատական համակարգի առկայությունն ապահովվում է «Արդարադատության խորհրդի և «ՎՎ Դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի միջոցով: Այդուհանդերձ, ոլորտում առկա են որոշակի ռիսկեր՝ կապված գործնականում «ՎՎ դատական համակարգի անկախության ապահովման հետ, ինչի մասին նշվել է միջազգային հեղինակավոր կազմակերպությունների

¹⁶ Տես՝ «Գլոբալ էքոնոմի» ռեսուրսի կողմից Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա հաշվարկված [ինդեքսները](#):

կողմից տրված գնահատականներում¹⁷: Միևնույն ժամանակ, բացահայտված խնդիրների լուծման նպատակով տարվում են աշխատանքներ, ինչը վկայում է դատական համակարգում առկա ռիսկերը նվազեցնելու քաղաքական կամքի մասին:

Վերլուծության արդյունքներով, դատական համակարգի մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

31. **Համալսարանային գործունեության** վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

- **Կոռուպցիայի մակարդակի տեսանկյունից**, ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը դասել է իր գործունեության առանցքային ուղղությունների թվին՝ մշակելով կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ և ռազմավարություն: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի մոնիտորինգի արդյունքներով արձանագրվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ակնկալվող արդյունքների իրականացման մասով էական առաջընթաց: Այդուհանդերձ, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների գնահատմամբ¹⁸, կոռուպցիայի տեսանկյունից դեռևս ռիսկային են համարվում դատական համակարգը, ոստիկանությունը և հանրային ծառայությունների մատուցման ոլորտը:

Վերլուծության արդյունքներով, կոռուպցիայի մակարդակի մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

- **Ֆինանսական ներառման մակարդակի տեսանկյունից**, որպես ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման բաղադրիչ՝ ֆինանսական ներառումը ՀՀ ԿԲ առաջնային խնդիրների շարքում է: ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների հասանելիության և ծառայություններից օգտվելու մակարդակը գնահատվում է որպես համաչափ աճող: Առկա խնդիրների թվին են դասվում ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկի ոչ լրիվ բավարարումը, ֆինանսական ծառայություններից օգտվելու հետ կապված մեծ ծախսերը, ինչպես նաև բնակչության մի մասի՝ ֆինանսական ոլորտի վերաբերյալ

¹⁷ Տես՝ «Թրանսպերենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության [գեկույցը](#):

¹⁸ Տես՝ «Թրանսպերենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության [գեկույցը](#):

տեղեկացվածության ոչ բավարար մակարդակը, որոնց լուծման ուղղությամբ «ԿԲ կողմից իրականացվում են հետևողական աշխատանքներ:

Վերլուծության արդյունքներով, ֆինանսական ներառման մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

32. **Իրավական համակարգի** ընդհանուր նկարագրի տեսանկյունից հարկ է նշել, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շուրջ մեկ տասնամյակի պատմություն ունեցող համակարգի իրավական բաղկացուցիչը շարունակական զարգացում է ապրել՝ միջազգային պահանջները պատշաճ արտացոլելու համար պարբերաբար վերանայվելով և արդիականացվելով: Ոլորտում վերջին զարգացումը 2014թ. հունիսի 21-ին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքում և հարակից 14 օրենքներում փոփոխությունների իրականացումն է: Գործող իրավակարգավորմամբ ՓԼ/ԱՖ հանցակազմերը քրեականացված են ՖԱԹՖ-ի և միջազգային կոնվենցիաների պահանջներին համապատասխան, ներդրված է կանխարգելիչ միջոցառումների գործուն համակարգ: Գնահատման շրջանակներում ուսումնասիրվել են նաև իրավական համակարգին առնչվող առանձին հարցեր՝ հիմք ընդունելով ինչպես միջազգային փորձագետների կողմից կատարված վերլուծությունները և ներկայացված առաջարկները, այնպես էլ իրավասու գերատեսչությունների կողմից իրենց գործունեության ընթացքում կուտակված փորձն ու բարձրացված խնդիրները:

Վերլուծության արդյունքներով, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների՝ իրավապահ մարմինների համար հասանելիության մասով հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ կալանադրված, սառեցված և բռնագրավված գույքի պաշտպան կառավարման մեխանիզմների և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ առանց մեղադրական դատավճռի առկայության բռնագրավման մասով՝ միջին, ընդ որում երկու դեպքում էլ խոցելիության աստիճանը տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով գնահատվել է կայուն:

33. **Ինստիտուցիոնալ համակարգի** գնահատման նպատակով ուսումնասիրվել են համակարգի բոլոր մասնակիցների գործունեությունը բնութագրող քանակական ու որակական մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնակցի գործառոյթները և գործընթացները, ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսները, համապատասխան անձնակազմի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող գիտելիքները, հմտություններն ու փորձը, ինչպես նաև գործունեության

արդյունավետությունը՝ ըստ ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող վիճակագրական տվյալների: Վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

- Ֆինանսական դիտարկումների կենտրոնը, որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմին, հավաքում, վերլուծում և ըստ պատկանելության տեղաբաշխում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող տեղեկատվություն՝ այդ նպատակով իրականացնելով ներպետական և միջազգային համագործակցություն, ինչպես նաև սահմանափակ շրջանակով վերահսկողական գործառույթներ: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՖԴԿ-ի գործունեության արդյունավետությունը գնահատելու համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ներկայացվող ԿԳՀ-ների և ներպետական ու միջազգային գործընկերներից ստացվող տեղեկացումների վերլուծության արդյունքում տրամադրված ծանուցումների, ազգային և միջազգային հարցումներին տրվող պատասխանների քանակական ու որակական բնութագրիչները: Այդ տեսանկյունից, կարևորվել է 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններից բխող ՖԴԿ-ի նոր՝ սահմանափակ շրջանակով վերահսկողական գործառույթի պատշաճ իրականացումը:

Վերլուծության արդյունքներով, ՖԴԿ-ի կողմից իրականացվող՝ ՓԼ/ԱՖ տեղեկատվության հավաքման, վերլուծության և տրամադրման, ինչպես նաև ներպետական և միջազգային համագործակցության գործառույթների հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է շարժառեք, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- Իրավապահ մարմինները, մասնավորապես՝ «ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, «ԿԱ ոստիկանությունը, «Ֆինանսների նախարարությունը և «Գլխավոր դատախազությունն ապահովում են ՓԼ/ԱՖ գործերով մինչդատական վարույթների (օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների) իրականացումը, իսկ դատական մարմինները, մասնավորապես՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, «Վերաքննիչ քրեական դատարանը և «Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իրականացնում են այդ գործերով դատաքննության գործառույթը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում իրավապահ և դատական մարմինների գործունեության արդյունավետության գնահատման համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են հարուցված կամ ըստ ենթակայության ուղարկված քրեական գործերի, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի,

մեղադրական դատավճիռների և բողոքարկված դատավճիռների քանակը, ինչպես նաև կալանադրված և բռնագրավված գույքի արժեքը: Այդ տեսանկյունից կարևորվել է իրավապահ մարմինների կողմից փողերի լվացման հանցակազմ պարունակելու պոտենցիալ ունեցող դեպքերի և հատկապես նշված հանցագործության տարատեսակների (միայն ՓԼ, այլ երկրում կատարված նախորդող հանցագործություն, երրորդ անձանց կողմից ՓԼ) մասով քրեական գործերի հարուցման ու քննության, մեղադրական եզրակացությամբ դատարան ներկայացման, բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ կանխարգելիչ միջոցների կիրառության, ինչպես նաև դատական մարմինների կողմից վերը նշված գործերով մեղադրական դատավճիռների կայացման պրակտիկան բարելավելուն ուղղված միջոցառումների իրականացումը:

Վերլուծության արդյունքներով, իրավապահ և դատական մարմինների կողմից իրականացվող՝ քրեադատավարական գործառույթի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

- ՀՀ կենտրոնական բանկն իր համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացնում է ՀՀ տարածքում գործող բոլոր ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների, փոխանակման կետերի և գրավատների գործունեության լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության գործառույթը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՀՀ ԿԲ գործունեության արդյունավետության գնահատման համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կատարված ստուգումների քանակը, տեսակներն ու շրջանակը, բացահայտված խախտումների բնույթն ու քանակը, կիրառված պատժամիջոցների տեսակներն ու չափերը: Այդ տեսանկյունից կարևորվել է ՀՀ ԿԲ կողմից ռիսկահենք վերահսկողության սկզբունքների և գործիքակազմի լիարժեք ներդրումն ու հետևողական իրականացումը:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող՝ ֆինանսական հաստատությունների լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության գործառույթի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես ՆՈՖԳՏՄ-ների որոշակի տեսակների, մասնավորապես՝ աուդիտորական գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց, խաղատների, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, ապահովում է դրանց գործունեության համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՀՀ ֆինանսների նախարարության գործունեության արդյունավետության գնահատման համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կատարված ստուգումների քանակը, տեսակներն ու շրջանակը, բացահայտված խախտումների բնույթն ու քանակը, կիրառված պատժամիջոցների տեսակներն ու չափերը: Այդ տեսանկյունից կարևորվել է ՀՀ ՖՆ-ի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող աշխատակիցների վերապատրաստման և գիտելիքների խորացման, հեռակա վերահսկողության արդյունավետ իրականացմանը խոչընդոտող բացերի վերացման, տեղերում ստուգումների նպատակով կիրառվող գործիքների լրամշակման, ինտերնետային շահումով խաղերի վերահսկողության ռեժիմի բարելավման, ինչպես նաև վերահսկվող սուբյեկտների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովմանն ուղղված հետագա միջոցառումների ձեռնարկումը:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող՝ որոշակի ՆՈՖԳՏՄ-ների գործունեության կարգավորման և վերահսկողության գործառույթի հնարավոր խոցելիության ասֆիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

- ՀՀ արդարադատության նախարարությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեքստում իրականացնում է երկու գործառույթ՝ դատարանի վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու մասով իրավական օգնության ցուցաբերումն ապահովող մարմնի, ինչպես նաև նոտարների և ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի գործառույթները: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՀՀ արդարադատության նախարարության գործունեության արդյունավետության գնահատման համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ՓԼ նախորդող հանցագործությունների կատարման առնչությամբ հետախուզման մեջ գտնվող անձանց հանձնման հետ կապված հարցումները, նոտարների և ոչ առևտրային

կազմակերպությունների մասով կատարված ստուգումների քանակը, տեսակներն ու շրջանակը, բացահայտված խախտումների բնույթն ու քանակը, կիրառված պատժամիջոցների տեսակներն ու չափերը: Այդ տեսանկյունից կարևորվել է ՀՀ ԱՆ-ի կողմից ոչ առևտրային կազմակերպությունների վերահսկողության նպատակով բավարար ռեսուրսների հատկացման, ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության իրավական դաշտի միօրինակեցման, դրանց հաշվետվողականության պահանջների սահմանման և բարելավման, ինչպես նաև վերահսկվող սուբյեկտների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովմանն ուղղված հետագա միջոցառումների ձեռնարկումը:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող՝ փոխադարձ իրավական օգնության, ինչպես նաև որոշակի ՆՈՖԳՏՄ-ների գործունեության կարգավորման և վերահսկողության գործառույթների հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

- **ՀՀ փաստաբանների պալատը** վերահսկողություն է իրականացնում օրենքով սահմանված կարգով որակավորման քննություն անցած և փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած փաստաբանների (բայց ոչ՝ իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց) նկատմամբ, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին վերջիններիս համապատասխանության մասով: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՀՀ փաստաբանների պալատի գործունեության արդյունավետության գնահատման համար հաշվի է առնվել այն հանգամանքը, որ փաստաբանների գործունեության բնույթից ելնելով՝ գործանականում չափազանց փոքրաթիվ են այն հնարավոր դեպքերը, երբ փաստաբանների կողմից իրականացվող գործառնությունները կարող են դառնալ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով սահմանված հաշվետվողականության և այլ պահանջների կարգավորման առարկա, ինչի նկատմամբ վերահսկողության իրավասությունը վերապահված է ՀՀ փաստաբանների պալատին:

Վերլուծության արդյունքներով, ՀՀ փաստաբանների պալատի կողմից իրականացվող՝ փաստաբանների գործունեության կարգավորման և վերահսկողության գործառույթի հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է շատ ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

34. **Հաշվետվություն տրամադրող անձանց** գործունեության վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

- ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգի տեսանկյունից, ՀՀ-ում գործող բոլոր ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների վրա տարածվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջները: ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորվում է ինչպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերով, այնպես էլ ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերով: Հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանված են հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ) ուսումնասիրության իրականացման համապարփակ կանոններ, ինչպես նաև կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների բացահայտման, դրանց վերաբերյալ Լիազոր մարմնին ԿԳՀ-ների տրամադրման, գործարքների մերժման կամ դադարեցման, ինչպես նաև ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցման պահանջներ¹⁹ և դրանց իրականացման գործուն մեխանիզմներ:
- Ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների գործունեության մի շարք բնութագրական հատկանիշների տեսանկյունից, ինչպիսիք են շուկայում մասնակցության կշիռը, առաջարկվող պրոդուկտները/ ծառայությունները և դրանց մատուցման եղանակները, բարձր ռիսկային հաճախորդները և գործառնությունները, ինչպես նաև պատրադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը, վերլուծության արդյունքներով արձանագրվել է, որ ֆինանսական հատվածի ՓԼ/ԱՖ ռիսկերը հիմնականում կենտրոնացած են բանկային համակարգում (ինչը նախևառաջ պայմանավորված է ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 90%-ը կառավարելու և մյուս ֆինանսական հաստատությունների համեմատ պրոդուկտների/ ծառայությունների լայն տեսականի մատուցելու հանգամանքներով), որտեղ դրանք պատշաճ կերպով բացահայտվում, գնահատվում, կառավարվում և զսպվում են, իսկ ոչ ֆինանսական հատվածում համեմատաբար բարձր են ռիելթորների, իրավաբանների, թանկարժեք մետաղների և քարերի դիլերների, ինչպես նաև խաղատոների, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպիչների գործունեությանն առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը (ինչը հիմնականում պայմանավորված է կանխիկով գործարքներ կատարելու և վերահսկողության դաշտի ոչ համասեռ լինելու

¹⁹ ՆՈՖԳՏՄ-ների դեպքում այդ պահանջները հաշվի են առնում ՆՈՖԳՏՄ-ների որոշակի տեսակների գործունեության առանձնահատկությունները և դրանցից բխող կարգավորման տարբերությունները:

հանգամանքներով), սակայն մի շարք գործոններ նպաստում են այդ ռիսկերի տեխնիկապես չեզոքացմանը կամ արդյունավետ զսպմանը:

Վերլուծության արդյունքներով, ֆինանսական հաստատությունների գործունեության հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ ՆՈՖԳՏՄ-ների գործունեության հնարավոր խոցելիության աստիճանը՝ բարձր, ընդ որում երկու դեպքում էլ խոցելիության աստիճանը տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով գնահատվել է նվազող:

35. **Իրավաբանական անձինք** ենթակա են օրենքով սահմանված կարգով պետական գրանցման: «ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում և Կենտրոնական դեպոզիտարիայում պահպանվում են բավարար ծավալով և բովանդակությամբ տեղեկություններ առևտրային կազմակերպությունների սեփականատերերի վերաբերյալ, որոնք հասանելի են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում պետական գործառույթներ իրականացնող բոլոր իրավասու մարմիններին և հանրությանը, այդ թվում՝ ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին: Առկա իրավական դաշտը և գործառնական միջոցներն ապահովում են իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը:

36. Տրաստները և **իրավաբանական կազմավորումների** այլ տեսակները «Օրենսդրությամբ սահմանված չեն: Միևնույն ժամանակ, հաշվետվություն տրամադրող անձինք օտարերկրյա տրաստների հետ գործարար հարաբերություններ հաստատելիս կամ գործարքներ կատարելիս պարտավոր են իրականացնել հաճախորդի պատշաճ (իսկ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում նաև՝ հավելյալ) ուսումնասիրության բոլոր միջոցառումները, ինչը թույլ է տալիս ժամանակին բացահայտել օտարերկրյա տրաստների՝ «Ֆինանսական կամ ոչ ֆինանսական համակարգի միջոցով ՓԼ/ԱՖ տեսանկյունից ռիսկային գործառնությունների իրականացումը:

Վերլուծության արդյունքներով, իրավաբանական անձանց և կազմավորումների հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է ցածր, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ կայուն:

37. **Ոչ առևտրային կազմակերպությունները** «քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորմամբ կարող են գործել բացառապես գրանցված իրավաբանական անձի կարգավիճակով, և դրանց նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց ներկայացվող բոլոր պահանջները, այդ թվում՝

սեփականատերերի և իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկության մասով: Հասարակական ու բարեգործական կազմակերպությունները պարտավոր են պահպանել տեղեկություններ իրենց կողմից տնօրինվող գույքը կազմակերպության նպատակներին համապատասխան ծախսելու վերաբերյալ: ՀՀ-ում դրանց գործունեության և միջոցների ծախսման հիմնական ուղղություններն են կրթության/մշակույթի, սոցիալական ապահովության, սպորտի, առողջապահության և գյուղատնտեսության ոլորտները:

38. Ոչ առևտրային կազմակերպությունների մասով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության վրա բացասաբար են անդրադառնում դրանց գործունեության իրավական կարգավորման, հաշվետվողականության ու վերահսկողության հետ կապված բացերը, մասնավորապես՝ իրավական կարգավորման դաշտի ոչ միատեսակ լինելը, որոշ ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ հաշվետվողականության պահանջ սահմանված չլինելը, վերահսկողության հետ կապված գործառնական խնդիրները և այլն: Դրական հանգամանքների ու զարգացումների թվում կարելի է նշել Հայաստանի աշխարհագրական և ժողովրդագրական միջավայրերի առանձնահատկություններով պայմանավորված՝ ահաբեկչական գործունեության և ահաբեկչության ֆինանսավորման համար նպաստավոր նախապայմանների բացակայությունը, ինչն էապես նվազեցնում է ոչ առևտրային կազմակերպությունների՝ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով չարաշահման ռիսկը:

Վերլուծության արդյունքներով, ոչ առևտրային կազմակերպությունների հնարավոր խոցելիության աստիճանը գնահատվել է միջին, իսկ տեսանելի ապագայում փոփոխության միտումների առումով՝ նվազող:

39. ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման՝ ըստ դիտարկված բոլոր չափանիշների ստացված արդյունքներն ամփոփ տեսքով ներկայացված են սույն հաշվետվության [Հավելված 1](#)-ում:

Հավելված 1. ՓԼ/ԱՖ ոիսկերի ազգային գնահատման արդյունքները

| ՓԼ/ԱՖ տեսանկյունից հնարավոր սպառնալիքները | | | | | | | | |
|---|-------------|---|---|---|---|---------|--------|------|
| | Գնահատականը | | | | | Միտումը | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | Նվազող | Կայուն | Աճող |
| ՓԼ հնարավոր սպառնալիքներ | | | X | | | X | | |
| ԱՖ հնարավոր սպառնալիքներ | X | | | | | | X | |
| ՓԼ/ԱՖ տեսանկյունից հնարավոր խոցելիությունները | | | | | | | | |
| Միջավայրային տարրերը | | | | | | | | |
| Աշխարհագրական միջավայրը | | X | | | | | X | |
| Տնտեսական միջավայրը | | | X | | | X | | |
| Ժողովրդագրական միջավայրը | X | | | | | | X | |
| Կառուցվածքային տարրերը | | | | | | | | |
| Քաղաքական կայունությունը | | X | | | | | X | |
| Բարձր մակարդակով հանձնառությունը | X | | | | | | X | |
| Կայուն ինստիտուտների առկայությունը | | X | | | | | X | |
| Օրենքի գերակայությունը | | X | | | | | X | |
| Պատշաճ դատական համակարգի առկայությունը | | | X | | | X | | |
| Համատեքստային գործոնները | | | | | | | | |
| Կոռուպցիայի մակարդակը | | | X | | | X | | |
| Ֆինանսական ներառման մակարդակը | | | X | | | X | | |
| Իրավական համակարգը | | | | | | | | |
| Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն | | X | | | | | X | |
| Բանկային գաղտնիքի հասանելիություն | | X | | | | | X | |
| Կալանադրված, սառեցրած և բռնագրավված գույքի կառավարում | | | X | | | | X | |
| Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավում | | | X | | | | X | |
| Ինստիտուցիոնալ համակարգը | | | | | | | | |
| Ֆինանսական դիտարկումների կենտրոն | X | | | | | | X | |
| Իրավապահ և դատական մարմիններ | | | X | | | X | | |
| ՀՀ կենտրոնական բանկ | | X | | | | X | | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | X | | | X | | |
| ՀՀ արդարադատության նախարարություն | | | X | | | | X | |
| ՀՀ փաստաբանների պալատ | X | | | | | | X | |
| Հաշվետվություն տրամադրող անձինք | | | | | | | | |
| Ֆինանսական հաստատություններ | | X | | | | X | | |
| ՆՈՖԳՏՄ-ներ | | | | X | | X | | |
| Այլ մասնակիցները | | | | | | | | |
| Իրավաբանական անձինք և կազմավորումներ | | X | | | | | X | |
| Ոչ առևտրային կազմակերպություններ | | | X | | | X | | |